



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 24441 գործարքներ, որոնց քանակը 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 47.1%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 13.6%-ով:

2004թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9897 օտարման գործարքների 90.9%-ը կազմել են առուվաճառքները, 8.3%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 42.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. երկրորդ եռամսյակում, 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 34.2%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 8.0%-ով: 2004թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3229 առուվաճառքի գործարքների 68.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 0.9%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 2.4%-ով:

2004թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. 2-րդ եռամսյակում համարժեք է 551.2 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. երկրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		2003թ. երկրորդ եռամսյակ	2004թ. երկրորդ եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ
Կենտրոն	250.0-970.0	382.8	449.2	428.5
Արաբկիր	200.0-560.0	268.5	351.6	330.8
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	161.2	218.4	203.8
Նոր-Նորք	115.0-250.0	127.8	184.0	166.7
Ավան	120.0-190.0	124.4	173.8	159.2
Էրեբունի	120.0-300.0	138.0	175.3	169.9
Շենգավիթ	120.0-250.0	135.0	200.5	178.2
Դավթաշեն	130.0-260.0	161.2	219.8	203
Աջափնյակ	120.0-250.0	136.0	197.3	181.1
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	135.4	198.8	176.5
Նուբարաշեն	65.0-100.0	59.7	76.1	71.9
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	166.4	222.2	206.3

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. երկրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 33.6%, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 7.7% ով:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2004թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1442 բնակարաններ, որոնց քանակը 2003 երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 33.9%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 6.3%-ով:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. երկրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			2003թ. երկրորդ եռամսյակ	2004թ. երկրորդ եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	22.0-95.0	62.2	63.2	63.1
	<i>Ապարան</i>	18.0-40.0	27.1	31.7	27.9
	<i>Թային</i>	18.0-40.0	24.9	30.3	25.8
Արարատ	<i>Արտաշատ</i>	22.0-88.0	54.1	55.8	55.1
	<i>Մասիս</i>	20.0-90.0	54.2	58.8	54.9
	<i>Վեդի</i>	20.0-45.0	31.4	38.8	32.4
	<i>Արարատ</i>	22.0-50.0	31.4	36.4	32.1
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	35.0-102.0	83.6	87.2	85.3
	<i>Արմավիր</i>	21.0-58.0	45.3	50.9	46.1
	<i>Մեծամոր</i>	17.0-50.0	30.5	32.2	30.9
Գեղարքունիք	<i>Սևան</i>	20.0-50.0	30.5	32.7	31.0
	<i>Գավառ</i>	20.0-50.0	30.1	33.0	30.8
	<i>Մարտունի</i>	18.0-38.0	29.3	32.7	29.8
	<i>Վարդենիս</i>	10.0-21.0	17.0	17.4	17.3
	<i>Ճամբարակ</i>	13.0-30.0	15.8	17.9	17.7
Լոռի	<i>Վանաձոր</i>	30.0-90.0	60.5	62.2	62.1
	<i>Ստեփանավան</i>	20.0-48.0	33.0	34.5	33.4
	<i>Սպիտակ</i>	17.0-40.0	23.7	33.3	25.7
	<i>Ալավերդի</i>	15.0-40.0	25.3	25.8	25.7
	<i>Տաշիր</i>	15.0-28.0	19.2	22.7	19.9
Կոտայք	<i>Աբովյան</i>	40.0-110.0	82.6	87.9	84.5
	<i>Նոր Հաճն</i>	35.0-75.0	51.6	58.6	53.2
	<i>Բյուրեղավան</i>	15.0-45.0	35.1	37.4	35.5
	<i>Եղվարդ</i>	28.0-55.0	40.2	44.0	41.4
	<i>Հրազդան</i>	18.0-55.0	30.4	35.5	32.2
	<i>Ծաղկաձոր</i>	22.0-95.0	75.2	77.4	75.8
	<i>Չարենցավան</i>	13.0-55.0	30.7	35.3	32.1
Շիրակ	<i>Գյումրի</i>	30.0-100.0	69.7	72.2	72.1
	<i>Արթիկ</i>	17.0-45.0	25.1	28.4	25.9
	<i>Մարայիկ</i>	15.0-33.0	23.4	26.4	24.2
Սյունիք	<i>Գորիս</i>	21.0-45.0	29.5	33.9	30.2
	<i>Կապան</i>	18.0-52.0	28.8	32.6	30.0
	<i>Միսիան</i>	17.0-37.0	27.4	31.9	28.4
	<i>Մեղրի</i>	18.0-58.0	24.9	25.3	25.2
	<i>Ագարակ</i>	18.0-50.0	20.6	25.2	25.1
	<i>Քաջարան</i>	13.0-30.0	18.2	19.0	18.5
Վայոց Ձոր	<i>Վայք</i>	15.0-48.0	35.1	35.3	35.4
	<i>Եղեգնաձոր</i>	20.0-58.0	46.5	47.1	47.0
	<i>Ջերմուկ</i>	18.0-50.0	40.8	41.1	41.2
Տավուշ	<i>Դիլիջան</i>	15.0-54.0	36.0	37.2	36.2
	<i>Իջևան</i>	23.0-60.0	40.3	43.7	40.9

	<i>Բերդ</i>	15.0-43.0	29.0	29.6	29.3
	<i>Նոյեմբերյան</i>	15.0-45.0	17.7	27.3	26.8

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 5.5%, իսկ տարեկան աճը՝ 8.4%:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1496 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 283, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1213: 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 44.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 1.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 62.6%-ով: 2004թ. առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.5 %-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 4.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 5.6%-ով: 2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2004թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. երկրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		2003թ. երկրորդ եռամսյակ	2004թ. երկրորդ եռամսյակ	2004թ. առաջին եռամսյակ
Կենտրոն	255.0-990.0	386.0	462.5	443.1
Արաբկիր	205.0-580.0	271.3	361.6	331.9
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	162.7	219.9	205.9
Նորք-Մարաշ	120.0-390.0	289.7	331.9	320.8
Ավան	125.0-200.0	126.0	177.0	160.8
Էրեբունի	130.0-320.0	139.3	178.2	171.2
Շենգավիթ	120.0-260.0	136.0	201.4	179.3
Դավթաշեն	140.0-260.0	162.3	222.0	203.1
Աջափնյակ	125.0-230.0	138.0	200.3	181.9
Մայրթիա-Սեբաստիա	125.0-250.0	136.7	200.8	177.6
Նուբարաշեն	65.0-110.0	61.3	76.9	74.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-990.0	182.7	239.3	222.7

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 31.0%-ով, իսկ 2004 առաջին եռամսյակի համեմատ՝ 7.5%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. երկրորդ եռամսյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2003թ. երկրորդ եռամսյակ	2004թ. երկրորդ եռամսյակ	2004թ առաջին եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.2	83.7	83.2
	Ապարան	20.0-60.0	38.6	38.9	38.9
	Թալին	20.0-65.0	28.0	30.9	28.1
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.5	62.0	61.9
	Մասիս	50.0-90.0	62.3	63.0	62.7
	Վեդի	25.0-65.0	36.1	40.1	36.3
	Արարատ	20.0-60.0	37.2	38.4	37.6
Արմավիր	Վաղարշապատ	70.0-120.0	88.5	90.2	90.0
	Արմավիր	35.0-90.0	52.0	53.7	52.5
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.3	36.4	36.4
	Գավառ	20.0-60.0	39.7	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.6	35.1	33.9
	Վարդենիս	15.0-45.0	21.0	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-40.0	18.4	20.1	19.9
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	67.7	69.6	69.2
	Ստեփանավան	15.0-60.0	33.1	35.4	33.7
	Սպիտակ	20.0-55.0	24.0	34.2	26.1
	Ալավերդի	15.0-50.0	25.6	26.3	26.0
	Տաշիր	15.0-40.0	19.7	23.4	20.3
Կոտայք	Արուսյան	60.0-120.0	91.6	93.0	92.8
	Նոր Հաճն	40.0-80.0	54.0	58.8	54.5
	Բյուրևևան	25.0-60.0	38.1	38.7	38.2
	Եղվարդ	30.0-60.0	47.0	47.6	47.4
	Հրազդան	25.0-60.0	39.7	40.5	40.3
	Ծաղկաձոր	60.0-100.0	84.7	86.4	85.5
	Զարենցավան	20.0-55.0	33.1	36.1	33.6
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	89.6	91.5	91.2
	Արթիկ	15.0-50.0	28.4	29.2	28.7
	Մարալիկ	15.0-50.0	23.8	26.9	24.3
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.3	35.0	31.7
	Կապան	20.0-60.0	30.8	33.6	31.2
	Միսիս	20.0-55.0	28.3	32.8	29.2
	Մեղրի	15.0-40.0	28.1	28.2	28.2
	Ագարակ	15.0-40.0	23.6	27.5	27.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	36.8	37.0	37.0
	Եղեգնաձոր	25.0-65.0	48.9	49.3	49.3
	Ջերմուկ	25.0-65.0	42.9	43.4	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.0	39.5	39.2
	Իջևան	30.0-65.0	40.9	44.2	41.5
	Բերդ	20.0-55.0	30.6	31.0	30.9
	Նոյեմբերյան	20.0-55.0	30.6	30.8	30.8

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 2.8%, իսկ տարեկան աճը՝ 4.5%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 1257.10 հա /այդ թվում 34.61 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1047.64 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 1237.12 հա հողերի /այդ թվում 33.70հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1031.74 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 16.99 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում 0.33 հա Երևանում/, որից 13.92 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են : Օտարված 3.00 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ /այդ թվում 0.58 հա Երևանում/, որից 1.98 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 400.89 հա, որից 345.87 հա գյուղատնտեսական նշանակության են :

Ստորև ներկայացվում է 2004թ. երկրորդ եռամսյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտև ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	38	3.06	27	5.45	0	0.00	164	13.72	16	5.88
Արագածոտն	1	1.00	1	0.01	6	0.59	142	74.40	64	6.56	6	0.24
Արարատ	120	253.29	323	34.02	11	1.53	278	92.59	154	13.06	0	0.00
Արմավիր	5	25.77	0	0.00	0	0.00	201	216.94	80	6.93	1	0.002
Գեղարքունիք	0	0.00	7	0.80	2	0.19	13	18.95	16	2.37	3	0.62
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	30	28.15	15	1.53	1	0.002
Կոտայք	18	21.13	0	0.00	0	0.00	335	147.41	319	31.12	4	2.17
Շիրակ	0	0.00	1	0.003	1	0.29	71	61.99	18	1.12	2	0.04
Սյունիք	1	0.10	1	0.20	0	0.00	25	25.64	4	0.30	0	0.00
Վայոց Ձոր	5	25.18	11	1.94	0	0.00	13	3.16	5	0.55	0	0.00
Տավուշ	0	0.00	5	0.28	0	0.00	34	36.05	7	0.57	0	0.00
Ընդամենը	150	326.47	387	40.31	47	8.05	1142	705.28	846	77.83	33	8.95

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 2621 առուվաճառքի գործարքներ, որից 1292-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 1314-ը՝ բնակավայրերի, 12-ը՝ արդյունաբերական օբյեկտների և 3-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ :

2004թ. երկրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 554-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 38-ը՝ Երևանում /3.43 հա/, իսկ 516-ը՝ մյուս մարզերում /421.37 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 149 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /324.97 հա/, 375-ը՝ /39.66 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ /, 24-ը՝ հասարակական կառուցապատման հողեր /2.46 հա/, 3-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողեր /6.20 հա/ և 3-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր /51.52/:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վաճառված 12 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 3-ը գրանցվել է Արարատի մարզում /6.20հա/,

1-ը՝ Արմավիրի մարզում /0.03 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի մարզում /4.60հա/, 3-ը՝ Կոտայքի մարզում /1.00 հա/, 2-ը՝ Շիրակի մարզում /1.20հա/ և 2-ը Երևանում /5.59հա/:

2004թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 1292 գործարքներ, այդ թվում 149-ը՝ աճուրդով, 8-ը՝ դատարանի վճռով և 1-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						111	40.57	840.0	10000.0	2645.0
Ապարան						9	5.95	130.0	1150.0	405.0
Թային	1	1.00	840.0	840.0	840.0	17	14.33	200.0	1680.0	448.0
Ծաղկահովիտ						3	12.88	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	51	87.26	25.0	18095.0	1175.0	106	32.72	740.0	10000.0	2100.0
Մասիս	26	99.47	130.0	2430.0	672.0	78	27.82	400.0	8500.0	1305.0
Վեդի	42	65.05	95.0	2555.0	1220.0	90	29.15	450.0	7200.0	1290.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						35	48.17	650.0	4650.0	1340.0
Բաղրամյան	5	25.77	20.0	260.0	120.0	56	122.80	130.0	1200.0	495.0
Վաղարշապատ						110	45.97	980.0	14000.0	2200.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	1.20	420.0	1100.0	645.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						6	13.09	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի						10	6.18	360.0	5500.0	850.0
Գուգարք						5	1.70	500.0	6000.0	1685.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						10	8.52	180.0	4000.0	445.0
Տաշիր						5	11.76	100.0	400.0	260.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	12	2.08	860.0	865.0	862.0	199	38.52	520.0	14000.0	5200.0
Եղվարդ						110	48.61	380.0	10000.0	3365.0
Հրազդան	6	19.05	130.0	1200.0	415.0	26	60.28	250.0	6000.0	815.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						51	35.29	550.0	1200.0	695.0
Ամասիա						7	14.42	80.0	525.0	185.0
Անի						3	4.57	240.0	800.0	280.0
Աշոցք						6	2.86	60.0	210.0	150.0
Արթիկ						3	2.94	140.0	800.0	300.0

Սյունիքի մարզ										
Գորիս						8	7.60	200.0	1600.0	455.0
Կապան	1	0.10	270.0	270.0	270.0			120.0	2000.0	330.0
Մեղրի						2	0.61	400.0	4240.0	840.0
Սիսիան						15	17.43	90.0	1500.0	330.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	25.18	185.0	395.0	315.0	12	3.07	260.0	4000.0	2085.0
Վայք						1	0.09	120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										
Բերդ						4	1.57	100.0	2000.0	630.0
Իջևան						16	21.02	530.0	4000.0	1335.0
Նոյեմբերյան						14	13.46	100.0	8340.0	615.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1032 առուվաճառքի գործարքներ, որից 345-ը՝ աճուրդով, 4-ը՝ դատարանի վճռով և 4-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						64	65627.0	250.0	8000.0	2665.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թալին	1	78.0	2232.0	2232.0	2232.0			100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	170	184852.0	20.0	670.0	420.0	33	31630.0	300.0	6000.0	825.0
Մասիս	80	74435.0	210.0	1210.0	770.0	94	72720.0	300.0	20000.0	1030.0
Վեդի	72	80400.0	132.0	475.0	332.0	27	26284.0	250.0	2200.0	615.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						15	14609.0	300.0	5000.0	945.0
Բաղրամյան						1	1200.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ						64	53448.0	300.0	10000.0	1475.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	17309.0	300.0	2000.0	585.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի	4	4800.0	76.0	120.0	98.0	4	3600.0	200.0	600.0	250.0
Սևան						3	2800.0	200.0	2000.0	255.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1720.0	150.0	600.0	210.0
Գուգարք						10	7289.0	150.0	5200.0	735.0
Սպիտակ						3	5000.0	140.0	900.0	175.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր						1	1330.0	100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										

Արովյան						128	118708.0	300.0	10000.0	1785.0
Եղվարդ						164	170386.0	300.0	10000.0	1965.0
Հրազդան						25	20752.0	300.0	8000.0	1465.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						15	8704.6	250.0	3400.0	370.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք						1	1700.0	90.0	300.0	120.0
Արթիկ	1	30.0	4044.0	4044.0	4044.0	2	800.0	150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1360.0	150.0	1200.0	385.0
Կապան	1	2000.0	27.0	27.0	27.0			150.0	1400.0	410.0
Մեղրի						1	390.0	150.0	900.0	230.0
Սիսիան						1	1200.0	150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	10800.0	82.0	275.0	130.0	4	4473.0	150.0	2200.0	305.0
Վայք	2	8560.0	515.0	725.0	620.0			170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	5	2800.0	152.0	480.0	400.0	7	5740.0	150.0	2200.0	590.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 46 գործարքներ 32.34 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 20-ը՝ Արարատի /5.86հա/, 1-ը՝ Արմավիրի /1.5հա/, 2-ը Շիրակի /2.78հա/, 4-ը Վայոց Ձորի /0.97հա/, 11-ը Տավուշի /8.88հա/, 1-ը՝ Արագածոտնի /6.08հա/, 4-ը՝ Գեղարքունիքի /2.06հա/, 2-ը Սյունիքի /4.20հա/ մարզերում և 1-ը՝ Երևանում /0.19հա/:

2004թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ հանրապետությունում իրականացված 2336 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 36.5 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 43.0%-ով , իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 10.3%-ով:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 171 բնակարանների, 65 անհատական բնակելի տների, 629 հասարակական, 69 արտադրական նշանակության օբյեկտների, 1389 միավոր հողերի , 12 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ:

2004թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 143 վարձակալության գործարքների քանակները, 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 62.4%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 88.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 5638.47 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 60.28 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 5265.51 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության , 70.73 հա բնակավայրերի, 94.45 հա արդյունաբերական օբյեկտների, 0.80 հա անտառային, 127.51 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 9.46 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր և 9.72 հա էներգետիկայի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արագածոտնի մարզում՝ 1827.98 հա, որից 1817.13 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1927.54 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	8	995.00	107	822.13
Արարատ	2	380.00	92	265.32
Արմավիր	0	0.00	45	470.20
Գեղարքունիք	9	174.00	105	399.55
Լոռի	1	2.00	55	219.46
Կոտայք	5	376.54	68	218.72
Շիրակ	0	0.00	44	210.93
Սյունիք	0	0.00	51	279.70
Վայոց Ձոր	0	0.00	78	429.86
Տավուշ	0	0.00	4	22.12
Ընդամենը	25	1927.54	649	3337.99

2004թ. երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում :

2004թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1970 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 64.9%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 29.0%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 39.7 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.9 %/, հողերի /17.9 %/, հասարակական նշանակության օբյեկտների /18.4 %/, և առանձնատների /14.3 %/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1048 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 80.4%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 57.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 250.31 հա /այդ թվում 2.05 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 245.68 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 112.74 հա, որից 111.29 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. երկրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2004թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 100 և 42 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.6%: 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 94.5%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 79.7%-ով: 2004թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 40.1%:

2004թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 3917 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 70.0%-ով, իսկ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 4.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.5%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն